



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան

09.03.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 22/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Անտարես» ՍՊԸ-ի կողմից 16.02.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-22/17 ծածկագրով բողոք) և կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (այսուհետ նաև՝ Կենտրոն) 03.03.2017թ. ներկայացված եզրակացությունը, պարզել է հետևյալը.

1. «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումներն և պահանջը.

«Անտարես» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.02.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Ընկերությունը հայտ է ներկայացրել **20.12.2016թ.-ին**:

Ներկայացված հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի 27.12.2016թ. որոշմամբ «Անտարես» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ 2-րդ չափաբաժնի մասով:

Գնահատող հանձնաժողովի 2017թ. փետրվարի 3-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:

«Անտարես» ՍՊԸ-ն ներառվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր ներկայացրաց մասնակիցների թվին՝ այն հիմքով, որ համապատասխան եզրակացության համաձայն ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուի կողմից անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող 10 օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի 2017թ. փետրվարի 3-ին կայացված որոշումը՝ «Անտարես» ՍՊԸ-ի մասով, ոչ իրավաչափ է, քանի որ «Անտարես» ՍՊԸ-ն չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն և դրա ապացույցն է հանդիսանում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Կենտրոնի տարածքային հարկային տեսչության 01.02.2017թ. թիվ 411/5 տեղեկանքն այն մասին, որ Ընկերությունը չունի որևէ ժամկետանց հարկային պարտավորություն: Ընդ որում, նշված տեղեկանքը ներկայացվել է ինչպես գնահատող հանձնաժողովին, այնպես էլ ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Մինչդեռ հանձնաժողովի իրավասու անձից՝ Ա. Մաղաքյանից ստացվել է պատասխան առ այն, որ մասնակիցների տվյալների գնահատումն իրականացվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ուղղված հարցմանն ի պատասխան ներկայացված եզրակացության հիման վրա (Կարգի 48-րդ կետ): Իսկ գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կրկնակի հարցում կատարելու օրենսդրությամբ սահմանված իրավասություն չունի:

Ընկերությունը հայտնել է, որ հայտը ներկայացնելու ժամանակ «Անտարես» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված փաստաթղթերում հայտնել էր, որ որևէ հարկային պարտավորություն չունի: Ավելի ուշ, վերջինիս կողմից ապացույց է ներկայացվել նաև այդ մասին, այն է Կենտրոնի հարկային տեսչության կողմից տրված տեղեկանքը: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը պարտավոր էր ճշտել ներկայացված տեղեկությունների արժանահավատությունը, ապա նոր միայն որոշում կայացնել «Անտարես» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ելնելով Կարգի 48-րդ կետի պահանջներից՝ գնահատող հանձնաժողովն իրավունք չունի «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալները գնահատել իրականությանը չհամապատասխանող և վերջինիս գրկել գնումների գործընթացին մասնակցելուց:

Ընկերությունը, որպես իրավական հիմք, հղում կատարելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասին և 5-րդ հոդվածի 1-ին մասին՝ նշել է, որ «Անտարես» ՍՊԸ-ի հայտը բավարարել է պահանջվող բոլոր չափանիշներին և մերժման որևէ հիմք առկա չի եղել:

Ընկերությունը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Անտարես» ՍՊԸ-ի իրավունքները, ուստի այդ խախտումները ենթակա են վերացման և «Անտարես» ՍՊԸ-ին պետք է ներգրավել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Ընկերությունը, հղում կատարելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասին, խնդրել է դադարեցնել 30.01.2017թ. թիվ 4 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովի որոշումը «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ճանաչել հրավերին համապատասխանող:

Որպես փաստական հանգամանքները հիմնավորող ապացույց՝ Ընկերությունն բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Կենտրոնի տարածքային հարկային տեսչության 01.02.2017թ. թիվ 411/5 տեղեկանքի պատճենը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի արձանագրությունների և Ընթացակարգին վերաբերող այլ փաստաթղթերի պատճենները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ԳԲԽ-22/17 ծածկագրով բողոքի քննման շրջանակներում 22.02.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին «Անտարես» ՍՊԸ-ի ներկայացուցիչները պնդեցին բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումներն և դիրքորոշումը.

Կենտրոնը 17.02.2017թ. թիվ 01/04-1/563-17 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք, սակայն պատասխան չի ստացել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ԳԲԽ-22/17 ծածկագրով 22.02.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը չի ապահովել իր մասնակցությունը, սակայն պատշաճ ծանուցված է եղել նիստի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ:

3. ԳԲԽ-22/17 ծածկագրով բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը:

Կենտրոնը հորհրդին է ներկայացրել իր 03.03.2017թ. եզրակացությունն և առաջարկել է «Անտարես» ՍՊԸ-ի բողոքը բավարարել:

4. ԳԲԽ-22/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-22/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով **20.12.2016թ.**-ին հայտ է ներկայացրել «Անտարես» ՍՊԸ-ն:

2. «Անտարես» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով **20.12.2016թ.**-ին ներկայացված հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին

այտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 18.01.2017թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել եզրակացություն «Անտարես» ՍՊԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան Պատվիրատուի կողմից կատարված հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը տրամադրել է 23.01.2017թ. եզրակացություն, համաձայն որի՝ «Անտարես» ՍՊԸ-ն **20.12.2016թ.**-ին /հայտը ներկայացնելու օրվա դրությամբ/ ունեցել է **413 212 ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունը:

Միաժամանակ Պատվիրատուի կողմից արձանագրվել է «Անտարես» ՍՊԸ-ի կողմից 01.02.2017թ. և 03.02.2017թ. ներկայացված լրացուցիչ փաստաթղթերի և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին կրկնակի հարցում կատարելու խնդրանքի քննարկման փաստը: Վերոնշյալ խնդրանքը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է՝ նման իրավասության բացակայության հիմնավորմամբ:

6. Որպես փաստական հանգամանքները հիմնավորող ապացույց՝ Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Կենտրոնի տարածքային հարկային տեսչության 01.02.2017թ. թիվ 411/5 տեղեկանքի պատճենը առ այն, որ **20.12.2016թ.-ի դրությամբ** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

7. Կենտրոնը 22.02.2017թ. թիվ 01/04.1/597-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ **20.12.2016թ.** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «Անտարես» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

8. Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված 03.03.2017թ. թիվ 1/6-1/6987-17 գրության համաձայն՝ «Անտարես» ՍՊԸ-ն

0.12.2016թ.-ի դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

5. ԳԲԽ-22/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումներն և եզրահանգումը.

Խորհուրդն, ուսումնասիրելով «Անտարես» ՍՊԸ-ի կողմից 16.02.2017թ. ներկայացված բողոքն և կից փաստաթղթերը, ԳԲԽ-22/17 ծածկագրով բողոքը քննելու նպատակով 22.02.2017թ. ժամը 16:00-ին կայացած նիստի արդյունքները, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 03.03.2017թ. թիվ 1/6-1/6987-17 գրությունը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) դրույթներով, գտնում է, որ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (այսուհետ՝ օրենք)՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես

նույն Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Անտարես» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով **20.12.2016թ.**-ին ներկայացված հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուն, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 18.01.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել եզրակացություն «Անտարես» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան Պատվիրատուի կողմից կատարված հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը տրամադրել է 23.01.20017թ. եզրակացություն, համաձայն որի՝ «Անտարես» ՍՊԸ-ն **20.12.2016թ.**-ին /հայտը ներկայացնելու օրվա դրությամբ/ ունեցել է **413 212 ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունը: Միաժամանակ Պատվիրատուի կողմից արձանագրվել է «Անտարես» ՍՊԸ-ի կողմից 01.02.2017թ. և 03.02.2017թ. ներկայացված լրացուցիչ փաստաթղթերի և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին կրկնակի հարցում կատարելու խնդրանքի քննարկման

աստը: Վերոնշյալ խնդրանքը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է՝ նման իրավասության բացակայության հիմնավորմամբ:

Ընկերությունն բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Կենտրոնի տարածքային հարկային տեսչության 01.02.2017թ. թիվ 411/5 տեղեկանքի պատճենը առ այն, որ **20.12.2016թ.-ի դրությամբ** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) **չունի ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Կենտրոնը 22.02.2017թ. թիվ 01/04.1/597-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին՝ **20.12.2016թ.** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «Անտարես» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրած 03.03.2017թ. թիվ 1/6-1/6987-17 գրության համաձայն՝ «Անտարես» ՍՊԸ-ն 20.12.2016թ.-ի դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Այսպիսով, ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Կենտրոնի տարածքային հարկային տեսչության 01.02.2017թ. թիվ 411/5 տեղեկանքի և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրած 03.03.2017թ. թիվ 1/6-1/6987-17 գրության՝ «Անտարես» ՍՊԸ-ն **20.12.2016թ.-ի դրությամբ** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, ուստի Ընկերությունը իրավունք ուներ մասնակցելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և նրա հայտը, ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտքեր ունենալու հիմքով ենթակա չէ մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Անտարես» ՍՊԸ-ի կողմից 16.02.2017թ. ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ «Անտարես» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ կայացված որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն կարող է բողոքարկվել դատական կարգով:

ԳԲԽ-22/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի՝

անդամ

Ա. Գրիգորյան

անդամ

Գ. Գալստյան